

ՌՈՒՍԱՍՏՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ

Ռեկտոր _____ Ա.Ռ. Դարբինյան

Կրթական ծրագրի նկարագրություն

Պատրաստման ուղղություն 38.04.01 Տնտեսագիտություն

Կրթական ծրագիր. «Ֆինանսական տնտեսագիտություն»

Որակավորման աստիճան. «մագիստրանտ»

Կրթության ձևը. Առկա

Երևան 2016

Կրթական ծրագրի նորմատիվային տևողությունը – 2 տարի

Ակադեմիական կրեդիտների քանակը – 120

Ակադեմիական ժամերի քանակը – 4320 ալ. ժամ:

«Ֆինանսական տնտեսագիտություն» առկա կրթական ծրագիրը նախատեսված է հայկական և արտասահմանյան բուհերի շրջանավարտների համար, որոնք ունեն բակալավրի, մասնագետի, ինրպես նաև մագիստրոսի կրթական աստիճան, այդ թվում նաև նախկինում **«Ֆինանսական տնտեսագիտություն»** կրթական ծրագրում չընդգրկված ուսանողների համար և նախատեսված է ֆինանսների ոլորտում, դրամավարկային հարաբերություններում, բանկային և հարկային գործում ծրագրային գիտելիքների ստացմանը: Մագիստրոսական ծրագրերի ուղղությունները հիմնված են Տնտեսագիտության և բիզնեսի համալսարանի ֆինանսների և վարկային ոլորտի ավանդաբար հզոր գիտական դպրոցների հիմքի վրա: Կրթական ծրագիրն ավարտվում է պետական քննությամբ և մագիստրոսական թեզի պաշտպանությամբ:

«Տնտեսագիտություն» (մագիստրատուրա) ուղղությամբ մասնագետի պրոֆեսիոնալ գործունեության ոլորտն ընդգրկում է.

- Տարբեր ոլորտների և սեփականության ձևերի կազմակերպման տնտեսական, ֆինանսական, մարկետինգային և վերլուծական ծառայություններ;
- Պետական և մունիցիպալ մարմինների կառավարում;
- Ակադեմիական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում;
- Բարձրագույն և լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրեր:

«Տնտեսագիտություն» (մագիստրատուրա) ուղղությամբ մասնագետի պրոֆեսիոնալ գործունեության ձևերը.

- Գիտահետազոտական;
- Ծրագրային-տնտեսագիտական;
- Վերլուծական;
- Կազմակերպական-կառավարչական;
- Մանկավարժական:

«Տնտեսագիտություն» (մագիստրատուրա) ուղղությամբ մասնագետի կողմից լուծվող մասնագիտական խնդիրների շրջանակը.

- Գիտամանակավարժական գործունեություն;
- Գիտական աշխատությունների և հետազոտությունների աշխատանքային պլանների ու ծրագրերի նախագծում, խմբերի և անհատ կատարողների համար խնդիրների նախապատրաստում;

- Իրականացվող հետազոտությունների համար գործիքների նախապատրաստում, դրանց արդյունքների վերլուծություն;
- Տվյալների նախապատրաստում ակնարկների, հաշվետվությունների և գիտական հրապարակումների համար;
- Հետազոտության թեմայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում, վերլուծություն, հետազոտության խնդիրների լուծման մեթոդների և միջոցների ընտրություն;
- Գիտահետազոտական աշխատանքների, ռազմավարական հետազոտություններու հարցումներ կազմակերպում և իրականացում;
- Ուսումնասիրվող գործընթացների, երևույթների և օբյեկտների տեսական ու էկոնոմետրիկ մոդելների մշակում, որոնք առնչվում են մասնագիտական գործունեության ոլորտին, ստացված արդյունքների գնահատում և ներկայացում;
- Ծրագրային-տնտեսական գործունեություն;
- Խնդիրների նախապատրաստում և ծրագրային որոշումների մշակում, հաշվի առնելով անորոշության գործոնը;
- Խնդիրների նախապատրաստում և մեթոդական ու նորմատիվային փաստաթղթերի մշակում, ինչպես նաև մշակված նախագծերի և ծրագրերի ռեալացման (իրացման) համար առաջարկներ ու միջոցառումներ;
- Խնդիրների նախապատրաստում և տնտեսական սուբյեկտների սոցիալ-տնտեսական ցուցանիշների ծրագրային մշակում;
- Տնտեսական բաժինների, արտադրական և կազմակերպական պլանների նախապատրաստում, սեփականության տարբեր ձևերի կազմակերպում;
- Տարբեր շուկաներում տնտեսագետ գործակալների աշխատանքային ռազմավարության մշակում;
- Վերլուծական գործունեություն;
- Տնտեսական սուբյեկտների գործունեությունը բնութագրող սոցիալ-տնտեսական ցուցանիշների մշակում, հիմնավորում և հաշվարկման մեթոդիկա;
- Տնտեսական հաշվարկների իրականացման համար ինֆորմացիայի աղբյուրների որոնում, վերլուծություն և գնահատում;
- Ծրագրի արդյունավետության գնահատում, հաշվի առնելով անորոշության գործոնը;
- Կառավարման կազմակերպման գործող ձևերի վերլուծություն, դրանց բարելավման առաջարկների մշակում և հիմնավորում;
- Կազմակերպության, ոլորտի, տարածաշրջանի և ամբողջ տնտեսության գործունեության հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների դինամիկայի կանխատեսում;
- Կազմակերպա-կառավարչական գործունեություն;

- Տնտեսական և սոցիալական խնդիրների լուծման համար ստեղծագործական կոլեկտիվների կազմակերպում և ղեկավարում;
- Կազմակերպության և առանձին ստորաբաժանումների գործունեության և զարգացման ռազմավարության մշակում;
- Տնտեսական ծառայությունների և կազմակերպությունների ու ստորաբաժանումների ղեկավարում, սեփականության տարբեր ձևերի, պետական և մունիցիպալ կառավարման մարմինների կազմակերպում;
- Մանկավարժական գործունեություն;
- Ընդհանուր կրթական, բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, ինչպես նաև լրացուցիչ մասնագիտական կրթական հաստատություններում տնտեսական օրենքների դասավանդում;
- Ուսումնամեթոդական նյութերի նախապատրաստում:

«Ֆինանսական տնտեսագիտություն» (մագիստրատուրա) կրթական ծրագրի յուրացման արդյունքների պահանջները

Համամշակութային կարողություններ.

- Աբստրակտ մտածողության, վերլուծության, համադրության ունակություն;
- Պատրաստ լինել գործելու ոչ ստանդարտ իրավիճակներում, կրել սոցիալական և էթիկական պատասխանատվություն;
- Ընդունված որոշումների համար;
- Ինքնազարգացման, ինքնաիրացման, ստեղծագործական պոտենցիալն օգտագործելու պատրաստակամություն;

Ընդհանուր մասնագիտական կարողություններ.

- Պատրաստ լինել հաղորդակցվել ռուսերեն և օտար լեզուներով բանավոր և գրավոր ձևով;
- Մասնագիտական գործունեությանն առընչվող խնդիրների լուծում;
- Մասնագիտական գործունեության ոլորտում պատրաստ լինել կոլեկտիվ ղեկավարելուն և հանդուրժողական լինել;
- Ընդունել սոցիալական, էթիկական, կրոնական և մշակութային տարբերությունները
- Ընդունել կազմակերպակառավարչական որոշումները:

Մասնագիտական կարողություններ.

- Գիտահետազոտական գործունեություն;

- Հայրենական և արտասահմանյան հետազոտություններից ստացված արդյունքները ընդհանրացնելու և քննադատաբար գնահատելու հմտություններ, բացահայտել առաջատար ուղղությունները, մշակել հետազոտությունների ծրագիրը;
- Ընտրված գիտական հետազոտության արդիականության, տեսական և գործնական նշանակության հիմնավորում;
- Մշակված ծրագրին համապատասխան անցկացնել ինքնուրույն հետազոտություն;
- Իրականացված հետազոտության արդյունքները ներկայացնել գիտական խորհրդին հոդվածների կամ հաշվետվության ձևով;
- Ծրագրային – տնտեսական գործունեություն;
- Ինքնուրույն նախապատրաստել առաջադրանքներ և մշակել ծրագրային որոշումներ հաշվի առնելով անորոշության գործոնը, մշակել համապատասխան մեթոդական և նորմատիվային փաստաթղթեր, ինչպես նաև մշակված ծրագրերի և նախագծերի իրացման (ռեալացման) համար առաջարկներ ու միջոցառումներ;
- Ծրագրերի արդյունավետության գնահատում հաշվի առնելով անորոշության գործոնը;
- Մշակել տնտեսագետ գործակալների աշխատանքային ռազմավարությունը տարբեր շուկաներում;
- Վերլուծական գործունեություն;
- Պատրաստել վերլուծական նյութեր տնտեսական քաղաքականության ոլորտի միջոցառումների գնահատման համար և միկրո ու մակրոմակարդակում կայացնել ռազմավարական որոշումներ;
- Տնտեսական հաշվարկներ իրականացնելու համար վերլուծական և տեղեկատվության տարբեր աղբյուրներ օգտագործելու կարողություն;
- Հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշների դինամիկայի կանխատեսում կազմակերպության, ոլորտների, տարածաշրջանի և ամբողջ տնտեսության գործունեության համար;
- Կազմակերպա-կառավարչական գործունեություն;
- Պետական և մունիցիպալ կառավարման մարմիններում, սեփականության տարբեր ձևերի տնտեսական ծառայությունների և կազմակերպությունների ու ստորաբաժանումների ղեկավարման կազմակերպում;
- մշակել Կառավարչական որոշումների և հիմնավորել դրանց ընտրությունը սոցիալ-տնտեսական արդյունավետության տեսանկյունից;
- Մանկավարժական գործունեություն;
- Բարձրագույն ուսումնական հաստատություններ տնտեսական օրենքների դասավանդման ժամանակակից մեթոդների և մեթոդիկայի կիրառում

- Բարձրագույն ուսումնական հաստատություններում տնտեսական օրենքների դասավանդման ուսումնական պլանների, ծրագրերի և համապատասխան մեթոդական ապահովման մշակում: